

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2014թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ,
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2014թ. –ի ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն՝

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ՝ 80 միավոր,
բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից՝ 2 067 միավոր,
գ/ ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներից՝ 1 012 միավոր,
դ/ ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներից՝ 678 միավոր,
ե/ արտասահմանյան երկրներից՝ 899 միավոր, այդ թվում ԱՊՀ երկրներից՝ 76 միավոր:

Ընդամենը՝ 4 736 միավոր (2013թ.-ի 4 910 միավորի դիմաց):

2. Ելից թղթակցություն՝

ա/ Ելից գրություններ՝ 2 310 միավոր,
բ/ հրապարակումներ՝ 9 160 միավոր:

Ընդամենը՝ 11 470 միավոր (2013թ.-ի 11 515 միավորի դիմաց):

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2014թ. ընթացքում կազմել է 16 206 միավոր (2013թ.՝ 16 425 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2014թ.-ին 2013թ. համեմատությամբ նվազել է 174 միավորով, իսկ ելից թղթակցությունը՝ 45 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2014թ.-ի ընթացքում վերահսկողություն է սահմանվել 196 (2013թ.՝ 186 միավոր) փաստաթղթի (օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետ պարունակող փաստաթղթեր) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: